կոչէր Վլասքիյ, բազում գաւառ ունէր, և [1] բերդ ու քաղաք և գիւղք, զամենայն զոր ինչ ունէր՝ եդ գրաւական, և էառ բազում գանձ. և Աստուծոյ օգնութեամբ զօրք ժողովեց և կացոյց զօրավարս և զօրագլուխս, հազարապետս, հարիւրապետս, յիսնապետս և տասնապետս. և զզէնս պատերազմի, սրեղէն, հրեղէն և բոցեղէն, բազում և անթիւ անօթք: Եւ էառ զայս զուքսն և եկն ի այդ խուժադուժ երկրին իշխանին վերայ, որ կոչէր Ալեքշանտր, կրկին անկամ, որպէս գրեալ կայ ի գիրս՝ զառաջագոյն գալուստն իւր յառաջին թղթին, եթէ որպէս դարձուցին և փախուցին Լեհից մեծարարքն, վասն շնորհ առնելոյ այդ կրկին Յուլիանոսին. բայց մեք զերկրորդ գալուստն նորա այժմ գրեմք: Եւ յորժամ եկն և մերձեցաւ ի այդ անօրէնին երկիրն՝ զօրովք և ամենայն ընչիւք իւրովք, փութանակի էանց զջուրն՝ որ կոչի Տուրլու գետ. և այդ անօրէնն ի Պօթչանն (Պօթուչան) էր, բայց ի վերայ ճանապարհին զօրքն իւր եդեալ էր ասպատակութիւն ոչ բազում ինչ, որ դի-

1. Երեք չորս գրի չափ բան մի աւրուած է այս տեղ, զուցէ յիշած տեղեաց թիւն էր:

Ո՞վ է տեսել այսպէս խեղճ բան՝
Որ այս երկիրըս գործեցան.
Վա՜յ և եղուկ միաբերան
Որ այս չարիս հանդիպեցան,
Յասում եկաւ Հայոց ազգին՝
Այս Օլախաց երկրի միջին.
Զեկեղեցիքն աւերեցին
Եւ ըզգըրեանքըն այրեցին:
Այսպէս չարար պեղծըն Վազէս,
Յուլիանոս, Հողեփեռնէս,
Մարկիանէ և Հերովդէս,
Եւ փարաւոն ու Աղէկսանդրէս:
Բազում չարիք զոր գործեցաք
Եւ յօրինաց ի զուրս ելաք,
Եւ յաղօթից մեք ձանձրացաք
Զողորմութիւն տալըն մոռացաք [1].
ԶԱստուած սըրտէ ոչ սիրեցաք,
Ըզհայր և զմայր ոչ պատուեցաք,
Ընկերատեաց մեք խիստ եղաք,
Եւ զհիւրն ի տուն ոչ ընկալաք,
Ոխապահ և խռով կացաք,
Անհաշտութեամբ զօրն անցուցաք.
Բամբասանաց տեղի տըվաք,
Որ այս չարիս հանդիպեցաք:

Լալով ասեմք, թէ Տէր մեղայ.
Դու արարիչ՝ մեզ ողորմեա,
Ի այլազգաց զմեզ ազատեա
Ի այս ցաւէս շուտ փարատեա [2]:
Դարձեալ կրկին հրաման հանեց,
Ամէն քաղաք աւմաշ ղըրկեց,
Ըզգլուխ Հայեր զամէն բռնեց
Զեկեղեցին ամէն մոհրեց.
Զերեցանին, զվոյթըն ձենեց,
Եւ ակամայ զիւրենք կնքեց.
Լուսաւորչին հաւտէն հանեց,
Մեծ հրամանաւ ապըսպըրեց.
Թէ, զինչ Հայ կայ՝ թող մըկրտին,
Կանայք աղջկունքն ի միասին,
Թող Հայ չկենայ ի յիմ երկրին [3],
Ամէն Հռոմի հաւատ լինին.
Եկեղեցիք զինչ կայր Հայի
Խոթին, Սէրաթ, յԱսպազարի [4],
Վասլով, Պօչտան, յՌուսումանի,
Ամենեքեան հիմնէն քակի:
Սաստիկ հրաման եհան կրկին.
Զեկեղեցիքն աւերեցին.
Եւ զինչ անօթ կայր կողոպտեցին
ԶՀայոց գրեանքն այրեցին:

1. Միւս Օ. Տան ուրացար:
2. Դու կազդուրեա:
3. Ի մեր երկրին.
4. Եազպազարի. որ է ծանօթ քաղաքն Եաշ՝